ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1895. ԹԻՒ 21 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 108

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York, N. Y. Vol. V, 1895.

THE UNITED STATES AND THE ARMENO-TURKISH CRISIS.

OUR ATTITUDE TO TURKEY.

Should We Take a Hand in the Humiliation of the Turk?

TO THE EDITOR OF THE SUN—*Sir:* History is the tribunal of God, said Hegel. The Great Judge is bringing the Turk to justice, and the whole world, with a palpitating heart, is watching the process. The witnesses invited are the Christian Governments, and they are, after some hesitation, going to the court. Should the United States, as one of the greater Christian powers, go also? I humbly beg to indicate briefly the true nature and the deeper connections of the Armeno-Turkish crisis, and to come to a suggestion as to the official line which should be adopted by this country. When the Ottoman power gave obvious signs of decline, a revival of the Islamic faith started in the cradle of Mohammedanism, Arabia, and from there it propagated itself throughout the Moslem world. As the process of reducing the domain of Islam by Christian conquests advanced and the contact of the Christian with the Moslem world became closer, the Mohammedan reaction grew stronger in proportion. The aim of the movement was to reconstitute the Islamic theocracy in its purity, to return to the primitive orthodoxy, and in this way to recover the expansive power and glory of the first ages of Islam. Hence the reform movements of Wahabism in Arabia and Syria, of Babism in Persia, and of Senoossism in Africa. Hence also the Moslem insurrections in India, China, Afghanistan, and Arabia. This last country is at present the hotbed of the reactionary spirit, and opposed fiercely to the claims of the Turkish Sultans to the title of Caliph, notwithstanding the fact that the present Sultan, Abdul Hamid, is heart and soul devoted to the reactionary movement without being himself of the race of "the Prophet."

Not all Moslems follow the great retrograde current. Out of it some Turks are being agitated, mostly in Constantinople, respecting whom important misapprehensions prevail in Europe. These Turks form the party known as "the Young Turkish party," sometimes called "the liberal," "the progressive," "the Constitutionalist." In applying these epithets to the Turkish party, Christians do not suspect how subjective a notion they substitute for the reality. Turkey, especially Constantinople, being the most prominent point of Islamate that has come to continuous and often violent friction with European civilization, some Turks have come to develop the spirit of nationality to the detriment of their religious faith. Midhat Pasha was the foremost member of this comparatively weaker party, and his abortive Constitution the last embodiment of the "progressive" spirit.

But this progressive spirit, at its bottom, is a ridiculously superficial, illusory thing. Some of the Young Turks believe that the constitutional system of government in Europe is a cause, or the cause, of European progress. They are simple to the point of childishness. They wofully fail to comprehend the great complexity of the factors, and the powerful Christian factor, of the glorious Western civilization. The other consideration that leads them in their progressive movement is even less progressist. Every time that a catastrophe threatens the Ottoman empire the progressives manage to make a show, now by a "Hatt," now by a constitutional scheme, in order to mislead the judgment of Europe and get a new lease of existence. As soon as the danger is averted their liberal ardor is cooled down. Vain as is the magic attempt

of the Young Turks to create the fruit where the tree has not been and cannot be planted, they have incurred the hostility of their co-religionists and are treated by Sultan Hamid as heretics. And heretics they are. The idea of a Parliament limiting the absolutism of the Caliph is an anti-Islamic, irreligious notion. Hamid, in his capacity of Pope, instituted some sort of Inquisition and executed a great number of Turks who professed, or were suspected to profess, such infidel notions. He thus purified his church. He purified also the administration of his empire by purging it of all the Christian elements formerly introduced under European pressure.

There was one more step, the most gigantic one, to be taken, and that was the elimination of the Armenian danger. This Christian race was a European rival, or becoming so in the very bosom of Turkey, and not only disturbed by its greater industry and progressiveness the ease of the Osmanlis, but offered to the American missions a basis of operation against Islam, and to Europe fresher grounds for diplomatic intervention in Turkey. In carrying out the colossal scheme of exterminating the Armenians, Hamid deceived the European powers by promises and false compliances as long as he could, and now he is openly defying them. No Sultan had ever carried the Caliphal dignity to such contemptuous heights in his treatment of the great Christian States. From his haughtiest height Hamid treated recently the United States, too, when he demanded the withdrawal of the American missionaries from Sassoon, where they were engaged in a purely charitable, absolutely lawful work of feeding and clothing the surviving victims of the great massacre. Hamid is a zealous, typical representative of the orthodox reform party, devoted altogether to the interests of Islamic renaissance, a shrewd diplomat, a hero—that is, from the Mohammedan point of view. From the general standpoint of Christian or European civilization, he is a lying, infamous coward, a tyrant of the cruelest type, blinded by fanaticism, who believes it to be his sacred privilege to expose his Christian subjects to the horrors of the foulest oppressions, and by whose orders torrents of innocent blood are now flooding his empire.

Let it be well understood that these unspeakable enormities are not at all the outcome of Sultan Hamid's personal policy, as some have supposed. It would be impossible for him to initiate such a policy and continue it twenty years were it not in perfect harmony with the views and wishes of the immense majority of the Turks. Of course he made use of official measures calculated to inflame the religious ardor of the lower classes somewhat cooled down by the campaign of 1877, and by persisting in that direction he succeeded in rousing their fanaticism to the highest pitch of fierceness. The result is what we begin to see, a complete loss of balance between violence of feeling and real strength and an accelerated gliding toward the abyss. Mohammedan power cannot be regenerated by a return to its primitive state, nor can it harmonize itself with Christian institutions. No fall of ruler, no Hatt, no party agitation, no surface change of any sort whatever can avail. It has run its full course of evolution and is stuck in an impossible situation out of which it can only be led by the Christian powers. And that is what the nations are invited by the Great Judge to do. To that end their naval forces are being concentrated near the great Moslem capital. They are not going to merely punish those who have been the curse of humanity, but to save the Moslem world by humiliating its head to enter "at the straight gate" into "the narrow way which leadeth unto life."

It would be, therefore, a huge mistake to minimize the Armeno-Turkish difficulty to the proportions of an international question and to act accordingly. It is the crisis of the great struggle which has been going on for twelve centuries between the kingdom of Christ and that of Mohammed, and it is pregnant with tremendous possibilities for good or for evil. And the United States is the only power which, by a wise and prompt co-operation with Europe, can give the right direction to the accumulating forces. There is no question of entangling alliances. This country can and must avoid alliances. To join one group of powers against another would be to kindle the great war. To keep aloof altogether would be the denial of the great role which the United States is destined to play in the history of the world. Indeed, the situation of America on this side of the Atlantic does suggest a policy of non-intervention in ordinary international difficulties on the other side, but the very same situation, on such momentous occasions of universal importance, commands it to throw all the weight of its might to correct the equilibrium of powers engaged in a crisis.

The Almighty who, when He decreed the emancipation of the Jewish captives and the fall of Babylon, ordered to "call together against her the kingdoms of Ararat, Minni and Askenaz," is at this moment calling together the powers, extending His invitation to the greatest of them, to America, to add to the solemnity of and give purity of intention to the great process by which He desires to subject the Mohammedan world to the salutary influence of Christian rule and civilization. There is not one hour to lose. Let the elite of the nation, the highest expressions of the American soul, speak and awake the nation to full consciousness of the noble part which Providence is inviting her to play.

M. S. GABRIEL,
President of the Armenian Patriotic Alliance,
Nov. 18th. 202 W. Twenty-third St.

Միացեալ Նահանգաց ծերակուտին անդամ Հօր, Նոյ. 24ին, հետեւեալ հեռագիրն ուղղեց Նախագահ Ֆիլիպինի.—

«Կրնաք վստահ լինիլ իմ բանիւ և քուէով օգնութեանս վերայ ի նպաստ ամենակորովի գործողութեան որուն կըրնաք ձեռնարկել արգիլելու համար Թուրքիոյ Հայոց դէմ անդրագոյն խժդժութիւններ, մինչև իսկ եթէ որոշէք զայնս գործողներուն հետ վարուիլ իբրեւ յելուզակաց և մարդկային սեռին հասարակաց թշնամեաց հետ։

GEORGE F. HOAR

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" են

ՊԱՅՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

The United States and the Armeno-Turkish Crisis.— Խմբագրական նշմարք,—Թէ ակ՞տք է որ Ամերիկայի Հայերն հիմա երթան Թուրքիոյ դէմ Պատերազմի.—Դիմում առ Միացեալ Նահանգս որ Միանայ Տէրութեանց Վերջացնել Օսմ. Կայսրութիւնն.— Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Կ. Պոլսէ.— Սուլթան Համիտ առ Ոտս Լորտ Սոլզպէրիի.— Այլևայլք.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

ԶԷՅԹՈՒՆ հաւանօրէն այժմ պատերազմի մէջ է Թուրք բանակին դէմ։ Օսմանեան կառավարութիւնն ջանաց Պատրիարք Հօր միջոցաւ համոզել Զէյթունցիներն զինաթափ լինիլ, խոստանալով թէ վնաս չպիտի հասնի իրենց։ Զէյթունցիք բաւական խելք ունէին Թրքի առաջարկութեանց չհաւատալու։ Նոքա կարող են դադարիլ Թրքին դէմ գնելէ հետեւեալ պայմաններով — Նախ եւրոպական տէրութեանց հիւպատոսներ կամ յատուկ պատուիրակներ երթան Զէյթուն և իրենց ներկայութեամբ հաշտութիւն գործեն, և երկրորդ, որ Զէյթունի կառավարութիւնն Զէյթունցւոց կողմէն նշանակուած քրիստոնեայի մի յանձնուի, և քաղաքին մօտ Թուրք զօրք կամ Թնդանօթ չմնայ։ Եւ երրորդ որ Զէյթունի մէջ գոնէ երեք տէրութեանց փոխ-հիւպատոսներ մնան առ ժամանակ մի, այսինքն մինչև արեւելեան խնդրոյն արմատապէս լուծումն.

***

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՅՆ արմատապէս լուծումն պիտի լինի Թուրքիոյ այլ և այլ մասանց վերայ այլ և այլ քրիստոնեայ տէրութեանց տիրելովն, և այդ բան, ըստ ամենայն մարդկային հաւանականութեան, պիտի կատարուի այս անգամ։ Հաւանական չէ որ Տէրութիւնք այնքան նաւային զօրութիւն ի Սելանիկ, ի Զմիւռնիա, ի Պէյրութ և յԻսկէնտէրուն համախմբելէ վերջ, ինչպէս կ'անեն այս պահուս, ետ դառնան նորէն թոյլ կերպով խնդիրն կարկատելով։ Այդ պիտի լինէր երկիրն նորագոյն և աւելի ահաւոր աղէտներու մատնել։ Թրքին այլ ևս վայրկեան մի վստահիլ բարեկարգութեան գործն՝ կը լինի հայհոյել Աստուծոյ և բանականութեան ու խղճի յստակագոյն հրամաններըն առ ոտն կոխել։

***

ԱՄԵՐԻԿԱ պա՞րտի Եւրոպիոյ հետ աջակցիլ Արեւելեան Խնդրոյն վաղ ընդփոյթ և բարեծին լուծում տալու, այդ խնդիր նիւթ եղաւ Հ. Հ. Դաշնակցութեան նոր մէկ հաղորդագրութեանն, որ հրատարակեցաւ Նիւ Եորքի Սըն և Թրիպիւն օրաթերթերուն մէջ ինչպէս և ուրիշ նահանգաց մի քանի թերթերում։ Յօդուածն կարեւոր անձնաւորութեանց համակիր ուշադրութեան արժանացած է և առանց ազդեցութեան չէ նոյն իսկ պաշտօնական շրջանաց մէջ։ ՀԱՅՔի ներկայ թուով անգլիերէն բնագիրն կը հրատարակեմք որպէս զի այլ և այլ նահանգաց մէջ ցրուեալ մեր հայրենակիցներ կարող լինին կարդալ զայն Ամերիկայի մշակուած շրջաններում։

***

ՅՈՒՍԱՀԱՏԵԼՈՒ ՉԵՆՔ։ Իրաւ ահագին է աղէտն, անհուն զոհողութիւն եղաւ Հայ ազգին կողմէն, բայց փրկութեան յոյսն այժմ աւելի փայլուն է քան երբէք։ Շարունակենք ուրեմն աշխատիլ ամենայն զօրութեամբ և ամենայն խոհեմութեամբ։

Ամերիկայի Հայերն աւելի լաւ կ'անեն այս պահուս որ նիւթական ուժի և բարոյական խրախուսի աղբիւր լինին մայր Հայրենեաց, և կարող անեն զայն ինքզինք պաշտպանելու քան թէ իրենք երթան զնա պաշտպանել։

ԹԷ ՊԷՏՔ Է ՈՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ ՀԻՄԱ ԵՐԹԱՆ, ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Ազգայինք ոմանք գուցէ կարծել փորձուին թէ յօդուածիս խորագիրն դիտմամբ խոշոր ձևի տակ գրուած է և լուրջ հարց մի չէ։ Սակայն Ամերիկայի լրագրաց մէջ ծանուցուեցաւ թէ Հայերն 1,000 հոգիէ բաղկացած բանակ մի կազմելու վերայ են երթալ պաշտպանելու համար իրենց հայրենակիցներն թուրք մորթիչներու դէմ։ Խմբագրութեանս ալ անհատներ և ընկերութիւններ նամակաւ կամ անձամբ դիմեցին այս խնդրոյն նկատմամբ մեր կարծիքն ու աջակցութիւնն խնդրելու։ Ուրեմն երկու խօսքով պարզենք այս մասին մեր տեսութիւն։

Եւ նախ ասենք թէ չարժուումն լուրջ և անկեղծ է։ Ոչ 1,000, բայց թերեւս մի քանի հարիւր երիտասարդներ հաստատ յօժարութիւն ունին իրենց անձերն նուիրելու հայրենեաց այս ճգնաժամուն մէջ։ Մեր հայրենակցաց մէջ յԱմերիկա, թերեւս աւելի քան այլ երկրաց մէջ, սրտի ցաւն և զայրոյթն ամենաաստիկ է։

Բայց Հայրենիք երթալու, եւրոպական մայրաքաղաքներէն խմբովին անցնելով և ցոյցեր անելով, որպէս կը մտադրեն դայրագնեալք, պատեհ ժա՞մն է այժմ։ Այս հարցման պատասխանելու համար նկատենք իրաց ընդհանուր վիճակն։ Պոլսեան գոյցէն յետոյ ազգին առաջնորդաց քաղաքականութիւնն էր սպասողական դիրք բռնել։ Բայց Թրքերն ա՛յնպէս լսած էին թէ Հայք գաւառաց մէջ ընդհանուր յարոյթ մ՚անելու ծրագիր ունէին, և կառավարութիւնն էր ստեղծած այդ զբրոյց յատուկ չարամտութեամբ։ Եւ երբ Դուռն առ երեւոյթս ընդունեց բարեկարգութեան ծրագիրն, հրամանյղեց գաւառներն որ թուրքք սկսին գՀայս ջարդել։ Եւ այնպէս ալ եղաւ։

Հիմա Համիտ նաւատորմիղներու ահագին համախմբումներու առջեւ քիչ մի վախցած է և Լ. Սոլզպէրիի ոսքն ի՛նալու չափ, այն նամակաւ զոր կը հրատարակեմք քիչ մի հեռուն, նուաստացած է։ Կ՚երեւի թէ գաւառներն հրաման յղած է որ ջարդն դադրեցուներն ... գէթ ցնոր անօրինութիւն։ Հետեւապէս պատճառ կայ յուսալու թէ մորթելու գործողութիւններն պիտի նուազին եթէ բոլորովին չդադարին։

Այս ամենն աչքի առջեւ ունենալով մեզ կը թուի թէ Ամերիկայի Հայոց այս միջոցին Հայրենիք վերադառնալու փափաքն պէտք է զսպուի։ Նախ վասն զի կոտորածոց գործն վերջանալու կը միտի։ Երկրորդ վասն զի Հայրենիքն աւելի դըրամի և նիւթական օգնութեան պէտք ունի այժմ քան մի քանի հարիւր մարդու։ Երրորդ վասն զի վերադարձողներուն առջեւ մուտքն խափանուած է։ Չորրորդ վասն զի պէտք է Ամերիկայի մէջ Հայկական մարտնչող ոյժն վերապահել այն պարագային ուր աւելի քան այժմ ստիպողական պահանջ գուցէ գոյանայ։

Կ՚եզրակացնենք թէ Ամերիկայի Հայերն աւելի լաւ կ՚անեն որ զինուորական կրթութիւն առնուլ սկսին ապագայ հնարաւոր հարկաւորութեանց համար պատրաստ գտնուելու, և միանգամայն չարունակեն դրամ շահիլ և իրենց հայրենեաց այս ահաւոր նեղութեան մէջ նիւթական նպաստ հասցունել։

ԴԻՄՈՒՄ ԱՌ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ

ՈՐ ՄԻԱՆԱՑ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ՎԵՐՋԱՑՈՒՆԵԼ ՕՍՄ·ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

(Թարգմանութիւն անգլ. բնագրէն)

Պատմութիւնն Աստուծոյ դատարանն է, ասաւ Հէկէլ։ Մեծ Դատաւորն ի դատ կը կոչէ զԹուրքն, և բովանդակ աշխարհ՝ սիրտ ի տրոփ՝ դէտ կայ դատաստանին։ Հըրաւիրուած վկաներն են քրիստոնեայ կառավարութիւններն, և նոքա՝ յետ սակաւ ինչ վարանման, կ՚երթան ահա ի դատարան։ Պա՞տ է Միացեալ Նահանգայ ևս, իրրեւ միայն ի մեծագոյն տէրութեանց, երթալ։ Խոնարհաբար թոյլտուութիւն կը խնդրեմ համառօտիւ նշանակելու զՀնարիա բնութիւնն ու խորագոյն կապակցութիւններն Հայա-Թրքական ճգնաժամուն, և դալ ի թելադրութիւն այն պաշտօնական գծին որում այս երկիրն պարտի հետեւիլ։

Երբ Օսմանեան Տէրութիւնն անկման ակներեւ նշաններ տուաւ, Իսլամ կրօնի արթնութիւն մի սկսաւ Մահմետականութեան որսրանն եղող Արաբիայում, ուստ սփռեցաւ ընդ բովանդակ իսլամական աշխարհն։ Որքան իսլամական հողոյ վերածումն ի հող քրիստոնէական յառաջդիմանց և քրիստոնեայ ու իսլամ աշխարհներըն աւելի սերտիւ ի հուպ եկան, այնքան աւելի զօրացաւ իսլամական հակագործութիւնն։ Այս շարժման նպատակն էր վերահաստատել իւր մաքրութեան մէջ իսլամական աստուածպետութիւնն, վերադառնալ նախնական ուղղափառութեան, և այս կերպով վերստանալ իսլամութեան առաջին դարերուն տարածուն զօրութիւնն ու փառքն։ Անտի՛ բարեկարգական շարժմունք Ուահապեանութեան յԱրաբիա և ի Սիւրիա, Պապեանութեան ի Պարսկաստան և Սնուսականութեան յԱֆրիկէ։ Անտի նաև իսլամական յարոյթք ի Հնդկաստան, ի Զինաստան, յԱֆղանիստան և յԱրաբիա։ Այս վերջին երկիրն է այժմ հակագործական ոգւոյ վառարանն, և սաստիկ հակառակ է Թուրք Սուլթանաց Խալիֆ տիտղոս կրելու յաւակնութեանն, թէպէտև ներկայ Սուլթանն՝ Ապտիւլ Համիտ՝ հոգւով սրտով բոլորանուէր է հակագործական շարժման՝ առանց ինքն լինելու «Մարգարէին ցեղն։»

Ոչ ամենայն միւսիւլմանք հետեւողեն այդ յետադէմ հոսանաց։ Անկէ դուրս կը յուզուին Թուրքք ոմանք, ամենամեծ մասամբ ի Կ. Պոլիս, որոց նկատմամբ կարեւոր թիւրիմացութիւններ կը տիրեն Եւրոպայում։ Այս Թրքեր կը կազմեն «Երիտասարդ Թրքաց կուսակցութիւն» ասուածն, որ երբեմն կը կոչուի նաև «ազատական», «յառաջդիմական», «սահմանադրասէր»։ Այս մակադիրներ ընծայելով Թուրք կուսակցութեանն՝ քրիստոնեայք չեն կասկածիր անգամ թէ որպիսի ենթակայական ծանօթութիւն մ'է որ կը դնեն բուն իրականութեանն տեղն։ Թուրքիա, մասնաւորապէս Կ. Պոլիս, լինելով իսլամ աշխարհին ոյն ամենաբարձր կետն որ շրջունակ և երբեմն բուռն կերպով չփուած է եւրոպական քաղաքակրթութեան հետ, ոմանք ի Թրքաց զարգացուցեր են ազգայնութեան ոգին ի ՁԼաս իրենց կրօնական հաւատոց։ Միտհատ փաշա այդ բաղդատաբար տկար կուսակցութեան առաջնորդ անդամն էր, և իւր վիժեալ Սահմանադրութիւն՝ «յառաջդիմական» ոգւոյն վերջին մարմնացումն։

Բայց այս «յառաջդիմական» ոգին, ի խորս իւր, ծաղրելի չափով ծանծաղ և ցնորական բան մ'է։ Երիտասարդ Թրքերէն ոմանք կը կարծեն թէ Եւրոպայում կառավարութեան սահմանադրական դրութիւնն պատճառ մի, կամ պատճառն է եւրոպական յառաջդիմութեան։ Նոքա միամիտ են ցոդայամտութիւն։ Նոքա ողբալի կերպով կը վրիպին արեւմտեան փառաւոր քաղաքակրթութեան գործօններուն և Քրիստոնէական հզօր գործօնին, բարդութիւնն հասկնալէ։ Միւս նկատողութիւնն որ կ'առաջնորդէ զիրենք իրենց յառաջդիմական շարժման մէջ նուազ և'ս յառաջդիմասիրական է։ Ասեն անգամ որ աղէտ մի սպառնայ օսմանեան պետութեան, յառաջդիմականք կը հնարին ցոյց մ'անել, մերթ «Հաթթով» մի, մերթ սահմանադրական ծրագրով մի, որպէս զի մոլորցուցեն Եւրոպայի դատողութիւնն և ստանան գոյութեան նորոգեալ պայմանաժամ մի։ Վտանգին խափանելուն հետ իրենց ազատական եռանդն ալ կը պաղի։

Թէպէտ զուր է երիտասարդաց մոգական փորձն ի ստեղծել պտուղ մի հոն ուր ծառն տնկուած չէ և չի կրնար արնկուիլ, նոքա ենթարկուած են իրենց կրօնակիցներուն թշնամութեան, և Սուլթան Համիտ ալ իրենց հետ կը վարուի իբրեւ հերետիկոսներու։ Եւ հերետիկոս արդարեւ են նոքա։ Խալիֆային բացարձակութիւնն չափաւորող Սահմանադրութեան մի դադափարն հակիսլամական, անկրօն վիտք մ'է։ Համիտ, իբրեւ Մահմետականաց Պապն, տեսակ մի հաւատաքննութիւն հիմնարկեց և մահուամբ պատժեց բազում Թրքեր որք այսպիսի անհաւատական մտքեր կը դաւանէին կամ դաւանող լինիլ կը կասկածուէին։ Նա այս կերպով մաքրեց իւր եկեղեցին։ Մաքրեց նոյնպէս իւր կայսրութեան մատակարարութիւնն այն ամեն քրիստոնեայ տարերքէն որք յառաջագոյն մուտ գտած էին եւրոպական ճնշման տակ։

Կը մնայր մի քայլ ևս, քան զամենայն հսկայականն, առնուլ, և այն էր արտաքսել զՀայկական վտանգն։ Այս քրիստոնեայ ցեղն եւրոպական մրցակից մ'էր,

կամ կը լինէր, Թուրքիոյ ծոցին մէջ իսկ, և ոչ միայն իւր մեծագոյն աշխատասիրութեամբ ու յառաջադիմականութեամբ կը խռովէր օսմանցւոց հանգիստն, այլ և Ամերիկեան առաքելութեանց ընդդէմ իսլամութեան գործողութեանց խարիսխ կ'ընծայէր ինչպէս և Եւրոպիոյ թարմագոյն առիթներ կ'ընձեռէր դիւանագիտական միջամտութեան ի Թուրքիա։ Զհայոց ջնջելու վիթխարի ծրագիրն ի գործ դնելու մէջ՝ Համիտ պատրեց եւրոպական Տէրութիւններն խոստումներով և սուտ համակերպումներով որքան ընդ երկար որ կրնար, և այժմ բացայայտ կերպով կ'անգոսնէ զիրենք։ Ոչ մի Սուլթան երբէք Խալիֆայական վեհանձնութիւնն այսպիսի արհամարհոտ բարձրութեանց հասուցած էր՝ քրիստոնեայ մեծ Պետութեանց հետ վարուելու ատեն։ Իւր ամենահպարտ բարձրութենէն վարուեցաւ նաև Միացեալ Նահանգաց հետ վերջերս երբ պահանջեց որ ամերիկացի միսիոնարներն քաշուին Սասունէն, ուր նոքա զբաղած էին պարզ ողորմութեան՝ բացարձակապէս օրինաւոր՝ գործով, այսինքն մեծ կոտորածէն պըրծած գոհերն կերակրելով և հագուեցունելով։

Համիտ նախանձաւոր, տիպար ներկայացուցիչ մ'է ուղղափառ բարեկարգութեան կուսակցութեան, բոլորովին նուիրուած իսլամական վերածնութեան շահերուն, վարպետորդի դիւանագէտ մի, դիւցազն մի— այդպէս, մահմեդական դիտակետէն։ Իսկ Եւրոպական կամ Քրիստոնէական քաղաքակրթութեան ընդհանուր դիտակետէն, Նա ստախօս, անարդ վատ մ'է, ամենանգութ տեսակէն բռնաւոր մի, մոլեռանդութեամբ կուրացած, որ կը հաւատայ թէ իւր սրբազան առանցնաչնորհն է իւր քրիստոնեայ հպատակներն ենթարկել ամենապիղծ հարստահարութեանց արհաւրացն, և որոյ հրամանաւ անմեղ արեան հեղեղներ կ'ողողեն ահա զիւր կայսրութիւն։

Թող լաւ հասկացուի թէ այս անասելի խժդժութիւնք ամենեւին Սուլթան Համիտի անձնական քաղաքականութեան արդիւնքն չեն, ինչպէս ենթադրեր են ոմանք։ Անկարելի պիտի լինէր նմա նոյնպիսի քաղաքականութեան մի սկիզբն տալ և քսան տարի չարունակել զայն եթէ Թրքաց անհուն մեծամասնութեան տեսութեանց և բաղձանաց հետ կատարելապէս համաձայն չլինէր այն։ Հարկաւ գործածեց պաշտօնական միջոցներ՝ բոցավառելու համար ստորին դասուց կրօնական եռանդն որ քիչ մի պաղած էր 1877ի պատերազմին ազդեցութեամբ, և այդ ուղղութեան մէջ յարատեւելով յաջողեցաւ նոցա մոլեռանդութիւնն հանել վայրագութեան բարձրագոյն աստիճանին։ Արդիւնքն եղաւ այն որ կը սկսինք տեսնել, այսինքն զգացման բռնութեան և իրական զօրութեան միջև հաւասարակշռութեան ամբողջական կորուստ և դէպ յանդունդ երագեալ սահումն։ Մահմեդական զօրութիւնը չի կրնար վերածնիլ իւր նախնական վիճակին վերադառնալով, և ոչ ալ կրնայ ինքզինք ներդաշնակել քրիստոնէական հիմնարկութեանց հետ։ Ոչ իշխանի անկում, ոչ Հաթթ, ոչ կուսակցական յուզմունք և ոչ ոևէ տեսակ մակերեսական փոփոխութիւն կրնայ օգուտ անել։ Իւր շրջափոխութեան լի ընթացքն կատարած է նա և կառեալ կասեալ անհնարին կացութեան մի մէջ յորմէ կրնայ դուրս հանուիլ միայն քրիստոնեայ Տէրութեանց ձեռքով։ Եւ ահա զայդ անելու կը հրաւիրուին ազգք ի Մեծ Դատաւորէն։ Առ այդ նպատակ նաւային զօրութիւնք կը համախմբուին իսլամական մայրաքաղաքին մօտ։ Նոքա չեն երթար լոկ ի պատուհասել զայնս որք մարդկային ազգին անէծքն են եղած, այլ ի փրկել զՄահմեդական աշխարհն խոնարհեցնելով զնորա գլուխ մտնելու «նեղ դռնէն» այն «անձուկ ճամբան որ դէպ ի կեանք կը տանի։»

Ահագին սխալ կը լինէր ուրեմն փոքրացնել զՀայաթուրք դժուարութիւնն միջազգային խնդրոյ մի համեստութեանց և ըստ այնմ գործել։ Նա ճգնաժամն է այն մեծ մրցանքին որ տասներկու դար չարունակուած է Քրիստոսի թագաւորութեան և Մուհամմէտին միջև, և յղի է վիթխարի հետեւութիւններով ի բարին կամ ի չարն։ Եւ Միացեալ Նահանգք է միակ տէրութիւնն որ, իմաստուն և վաղընդփոյթ գործակցութեամբ Եւրոպիոյ հետ, կրնայ պէտք եղած ուղղութիւնն տալ հաւաքուող ուժերուն։ Կենճռուա նիզակակցութեան խնդիր չկայ։ Այս երկիր կրնայ և պարտի խորշիլ նիզակակցութիւններէ։ Միանալ Տէրութեանց մէկ

խմբին հետ ընդդէմ միւսին՝ պիտի լինէր լուցանել մեծ պատերազմն։ Բոլորովին մէկուսի կալ պիտի լինէր ուրացումն այն մեծ դերին զոր Միացեալ Նահանգք նախասահմանուած են կատարել աշխարհի պատմութեան մէջ։ Ցիրաւի, Ամերիկայի կացութիւնն յայսկոյս Ատլանտեանի կը թելադրէ ոչ-միջամտութեան քաղաքականութիւն մի յայնկոյս ովկէանին պատահող սովորական միջազգային դժուարութեանց մէջ, բայց այն նոյն կացութիւնն իսկ, տիեզերական կարեւորութիւն ունեցող այսպիսի ծանր առիթներու մէջ, կը հրամայէ նետել իւր զօրութեան բովանդակ ծանրութիւնն յուղղել տագնապեալ զօրութեանց հաւասարակշռութիւնն։

Ամենակալն Որ, երբ վճռեց Հրէայ գերիներուն ազատագրումն և Բաբելոնի անկումն, հրամայեց «կոչել ի միասին ընդդէմ անոր զթագաւորութիւններն Արարատի, Մինեոյ և Ասքանազայ», կը հրաւիրէ այս պահուս ի միասին զՏէրութիւններն, տարածելով իւր հրաւէրն մեծագունին քան զամենայն, Ամերիկայի, աւելի հանդիսաւորութիւն և նպատակի որբութիւն տալու համար այն մեծ դատաստանին որով կ'ուզէ Նա ենթարկել զՄահմետական աշխարհն քրիստոնէական վարչութեան և քաղաքակրթութեան փրկաւէտ ազդեցութեանը։ Կորուսանելու ժամ մի իսկ չկայ։ Թող ազգին ընտրեալք, Ամերիկեան Հոգւոյ վեհագոյն արտայայտութիւնք, խօսին և արթնցնեն զազգն ի լիուլի գիտակցութիւն այն ազնիւ դերին զոր նախախնամութիւնն կը հրաւիրէ գինքն կատարելու։

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
Նախագահ Հ. Հ. Դաշնակցութեան
202, Արևմուտք, 23դ փողոց, Նոյ. 18։

Նիւ Եորք Թայմզի մէջ Նոյ. 26ին հրատարակուեցաւ հեռագիր մի որով Պատրիարք Իզմիրլեանի հետ տեսակցութիւնն կը պատմէ Թղթակից մի և կը գովէ Նորին Ամենապատուութեան իմացական և ֆիզիքական բարեմասնութիւններն։ Հեռագիրն կը վերջանայ Պատրիարքին շնորհակալութեան և սիրոյ ողջոյններովն ուղղեալ առ Միացեալ Նահանգաց ժողովուրդն որ գործնականապէս ցուցած է իւր համակրանք առ Հայոց վշտահար ազգն։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Հոկտ. 31 1895

Ծրագրի ընդունելութենէն երկու օր վերջ, կառավարութիւնն թուրք լրագրաց մէջ ծանոյց պաշտօնապէս թէ ի գաւառս բարեկարգութիւնք պիտի լինին ևն. սակայն անդ կառավարիչներու օգնականաց քրիստոնեայ լինիլն և ոչ իսկ հսկող մարմնոյն նկատմամբ բան մ'ըսուած էր։ Դեսպանք բողոքեցին Բ. Դրան, որ փորձեց համոզել թէ՝ իսլամներն գրգռելէ զգուշանալով այդպէս ըրած էր ևն։

Այդ ծրագրի ստորագրումն իրաց վիճակը աւելի վատթարացոյց քան բարելաւեց։ Դեռ ի կեդրոնական բանտին շուրջ 600 ձերբակալեալք մնան և չարչարանաց ենթարկին։ Շնորհիւ պաշտպանութեանց և կաշառքի շաբաթն մի քանի հատեր կը արձակուին, սակայն նորանոր ձերբակալութիւնք շարունակուին։ Թրքեր պատեհութիւն չեն փախցներ անարգել զՀայոմոլեռանդաց կողմանէ սպառնալիք ալ կը լսուին։ Հայքս սարսափի մէջ կ'ապրիմք։ Ոստիկանութիւնն հակառակ կառավարութեան խոստման եկեղեցին ապաստանողներէ շատեր ձերբակալած է ու շատերու ալ եաւէ ինկած. ասոնցմէ ոմանք պահուած կը մնան իրենց տներ կամ այլուր, ապահով տեղ չունեցողներն Ղալաթիոյ և Բերայի եկեղեցիներն ապաստանած են զորրս հսկելու համար այդ եկեղեցեաց դրան առջեւ սպասեն, տիւ և գիշեր, լրտեսներու խումբ մը։

Կանխաւ եկեղեցիներն ապաստանողներն, իրենց զէնքերն, ըստ դեսպանաց հրահանգին, անդ թողուցին։ Վերջերս այդ զէնքեր կառավարութեան յանձնուեցան դեսպանաց առաջին թարգմաններուն միջոցաւ, բոլոր եկեղեցիներու մէջ հազիւ 80 զէնք կային, և հակառակ ոստիկանաց կարծեաց ամենն ալ տարբեր գործարանաց արտադրութիւն և հին զէնքեր էին, և ոչ նոյնատեսակ ու նոր։ Աւելի քան հազար ապաստանողաց քով միայն 80 զէնք գտնուիլը մի՞թէ յեղափոխական գործ կրնայ համարուիլ որպէս ջանան հաստատել Թուրքերն։

Թուրք ազատական երիտասարդու-

թիւնն ալ շարժման մէջ է։ Նպատակնին Սահմանադրութեան գործադրութիւնն և երեսփոխանական ժողովոյ բացումն պահանջել, սակայն գիտնալով թէ՝ Համիտի օրով դժուարին գործ է դա. զայն տապալել կամին, բոլոր չարեաց պատճառն Սուլթանն կը հռչակեն։ Այս իմաստով չորս անդամներ (Հոկտ. 6, 13, 20, 27ի գիշերներն) թղթեր փակցուեցան Պոլսոյ Թրքաբնակ գանազան թաղերու մէջ։ Զերբակալութիւնք եղան, շատեր խեղդամահ պատժուեցան։ Հոկտ. 28ին ազատականաց կողմանէ խլրտումներ կը սպասուէր, ոստիկանութիւնն խիստ միջոցներ ձեռք առած լինելով չյաջողեցան ոևէ ցոյց անել։ Միայն Պէշիկ-Թաշի կառավարիչն Հասան փաշայ վիրաւորուեցաւ, ծովային նախարարն սպաննելու փորձն վիժեց։ Կ'ըսուի թէ՝ նոյն իսկ արքայական գերդաստանէն, ազատականաց կուսակիցներ կան, յորս և Սուլթանի փեսաներէ մին, այս իշխաններէ մի քանին բռնուած և Եըլաբզի բանտն կը մնան։ Ընդհանուր տարսափն տիրած է, թուրք արժէթղթերը օր քան զօր կ'իյնան։ Երեկ երկաթուղին 115ի իջաւ, քանսոլիտէն 24, շուրջ 2 ժամ պորսան և դրամատուներ փակ մնացին։

Այլ ևս կասկած չի մնար թէ՝ Սուլթանն որոշած և ուխտած է Հայ ցեղն բընաջինջ ընել իւր իշխանութեան մէջէ։ Արքայական հրամանաւ կոտորած կայ ամեն ուրեք, ամեն կողմերէ կոտորածի գուժեր հասնին. կոտորածն ընդհանուր է և այս ընթացքով քիչ ժամանակէն Հայն իսպառ պիտի ջնջուի Թրքի հողէն։ Թուեմք գլխաւոր կոտորածներն.

Բէմախի և Երիզայի ջարդերն արդէն ծանօթ են ձեզ։

Տրապիզոնի կոտորածն արդէն գրած եմ ձեզ, կ'արժէ շարժառիթն պարզել։ Վանի երբեմն կուսակալ Պահրի Փաշան Տրապիզոն մտնալուն մօտ Քրդերէ կը վիրաւորուի, այս գործ Հայոց վերագրելով խլրտում մը տեղի կունենայ, քանի մը Հայեր կը սպաննուին։ Հայք լսած իլլալով Պոլսոյ կոտորածն զարհուրած էին արդէն, վախնալով տեղացի իսլամներէն խանութին գոցելով իրենց տուներն ու եկեղեցիներն կ'ապաստանին։ Կառավարութիւնն եկեղեցեաց պարպուիլն կը պահանջէ, ժողովուրդն կը վախնայ ու չհնազանդիր, հիւպատոսք միջամտեն և վստահութիւն ներշնչեն Հայոց իրենց ապաստանարաններէն ելնելով խանութին բանան։ Ամեն բան անցած կը համարուէր, և ահա 2 ժամէն՝ իսլամ խուժանն յարձակի Հայոց խանութներու և տուներու վրայ, ընդ փոյթ և իրենց կ'աջակցին ի ձայն փողոց, ոստիկանութիւն և զինուորութիւնն. մի քանի ժամուան մէջ 500 Հայեր կը ջարդուին գլխաւորապէս դիւրակեցիկ և զարգացեալ դասակարգէն, որպէս զի կարենան օգտուիլ նոցա ստացուածքներէն և ինչքերէն։ Հայոց խանութներն ու տներն աւարի կա'ռնուին։ Ռուս զրահաւոր մը կը հասնի, որոյ ներկայութիւնն վերջ տայ ջարդին։ Շատ մը քրիստոնեաներ զրահաւորին մէջ կ'ապաստանին։

Օրտուի և Կիրասոնի Թրքերն պատրաստուած են Տրապիզոնի իսլամաց չաւղին հետեւիլ. հազիւ խլրտումն սկսած էր երբ ռուս զրահաւորներ կը հասնին և յուզմունք դադար գտնեն։

Բաղէշի կոտորածն սարսափելի է, ըստ սմանց 3,000 Հայ ջարդած են, ըստ այլոց Հայ իսկ մնացած չէ անդ։

Մարաշ կոտորածներ կրած է, մեծ կոտորածի մը սպառնալիքն կը տիրէ. պատրիարքարանէն օգնութիւն կը հայցեն, հաւանականաբար ներկայս գրած պահուս ջարդն սկսած է։

Տեղւոյս երիտասարդութիւնն յուսահատած է, իւր աչքերն դէպ ի քրիստոնեայ տէրութիւններն դարձուցած է, շատեր փրկութեան միակ միջոց Ռուսիոյ գիրկն նետուիլ կը համարին։

Կ. Պոլիս, Նոյ. 4, 1895

Հայոց դէմ ջարդն դեռ կը շարունակուի։

Բաղէշէն Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՝ Հոկտ. 25ի ջարդէն միայն երկու հարիւր դիակներ կան եկեղեցին, առանց հաշուելու կորուստներն և անյայտներն։ Ցայտնի կը տեսնուի թէ այս հեռագիր կորուստներ և անյայտներ բառերով շատ բաներ կը քողարկէ զորբս կառավարութիւնն թոյլատրած չէ հեռագրել։ Պոլսոյ մէջ մահացելոց թիւն աւելի էր քան հազար, մինչ 90 դիակներ յանձնուեցան, հաւանականաբար նոյն եղանակաւ անհետացած են և ի Բաղէշ մեռ-

եալներու մեծամասնութիւնն։ Կ'ըսուի թէ Բաղէշի կոտորածին սաստիկ ժամանակն, խումբ մի Հայեր «մենք իսլամութիւն կը ընդունինք մեզ գթացէք,» կ'աղաղակեն։ «Լաւ, կը պատասխանեն մոլեռանդներն, ուստի աւասիկ ձեզ ալ սուրեր, աջակցեցէք մեզ սա կեաւուրներն բնաջինջ ընել»։ Անշուշտ ակամայ թրքանալ ուզողներն չեն ընդունիր այդ առաջարկ, ուստի և զոհ կերթան իրենց եղբարց հետ, զի իսլամութեան արժանաւոր սիրտ ու զգացում չէին կրեր։

Հոկտ. 31ին Բ. Դռնէն հրաման հասնի ի Պատրիարքարան որ հեռագրաւ հրահանգ տայ առաջնորդներուն որպէս զի ժողովուրդն ոևէ շարժման տեղի չտայ։ Մինչդեռ նոյն օրն վերստին հրահանգ կուտայ կառավարչաց չնչին պատճառներն իսկ պատրուակ բռնելով ջարդել Հայերն։

Կառավարական այս հրահանգներուն վրայ Սեբաստիոյ շրջականերն մեծ յուզմունք տեղի ունեցեր են, ջարդ մ'ալ ըսկսած է, սակայն կառավարութիւնն առաջքն առած է կըսուի։

Այս գաղան կառավարութիւնն մէկ կողմանէ Հայերն ջարդելու և նոցա թիւն նուազեցնելու գաղտնի հրահանգ կուտայ, միւս կողմանէ եւրոպան խաբելու համար, հայաբնակ գաւառաց բարեկարգութեան հսկող Պոլսոյ մարմինն կը կազմէ, զոր երեկ Թուրք թերթերն հրատարակեցին։ Անդամներն են, վճռաբեկ ատենին խնդրագրերու նախագահ Շէֆգի էֆէնտի՝ նախագահ, երկրագործական դրամատան տնօրէն Ճէմալ Պէյ, պետական Խորհրդոյ անդամներէն Քոնսթանթին Գարաթէօտորի էֆէնտի, Ապտուլլահ Պէյ, հաշուակալութեանց ատենին անդամներէն Յով. Սաքըզ էֆէնտի, վերաքննիչ ատենին պատժական ճիւղին նախագահ Ճէլալ Պէյ, և երմտական նախարարութեան խորհրդական Տիլպէր էֆէնտի։

Տեղացի Թրքերն Հայոցս դէմ ղըրդռելու համար կառավարութիւնն գաղտնի լուր կը տարածէ թէ, Հայերն գաւառաց մէջ մգկիթներ մտած ու Թրքաց ջարդ տուած են։

Տրապիզոնէն եկող մի կը պատմէ թէ՝ այդ քաղաքի աւարառութիւնն այնչափ ընդարձակ սահմանի մէջ եղած է, որ անդ հայ հարուստ իսկ չէ մնացեր, և 20—30 հազար ոսկւոյ հարստութիւն ունեցողներն մուրալու վիճակին հասած են։

Սուլթանն յուսահատած է, գիշերն ի բուն կը հսկէ, առաւօտուն միայն անկողին կը մտնայ իւր հաւատարիմ ծառայ էմին աղային իւր ննջարանի դրան առջեւ պառկելու հրաման տալէ և այդ վիճակի մէջ տեսնելէ վերջ։ Այդ էմինէն զատ միայն մօրն վրայ վստահութիւն ունի, որոյ պատրաստել կուտայ իւր ճաշն։ Գրեթէ խելագարած է կ'ըսուի։

Միշտ աւագանին ի ժողով կը գումարուի պալատին մէջ։ Առանց Սուլթանի հաւանութեան ոևէ վճիռ չեն կրնար տալ։

Սահմ փաշան (Նախկին եպարքոս) Թուրք ազատականաց գլուխն կը կարծուի, և առ այդ Սուլթանէն արհամարհեալ է։ Սուլթանն կամի զայն սպաննել տալ և այդ դերն Հայոց վերագրել, որպէս զի թէ այդ ազատականաց պետն մէջէ վերնայ և թէ իսլամներն ևս առաւել գրգռուին Հայոցս դէմ։ Նոյն իսկ կ'ըսուի, թէ Նազըմ Փաշա Սեպտ. 30ի ցոյցի օրն կ'ուզէր Սահմն սպաննել տալ և Հայոց գործն հըրատարակել գայդ, բայց չյաջողեցաւ։

Նոյ. 1ին ուրբաթ օրն մեծ ցոյց մը կը սպասուէր Թուրք ազատականաց կողմանէ, ոևէ միջադէպ տեղի չունեցաւ։ Երէկուան համար աւելի մեծ էր շարժման հաւանականութիւնն կրկին բան մը չեղաւ։ Հայրենասիրական զգացում չունեցող չահախնդիր ազգէ մը շատ բան յուսալու չեմք։

Նոր հրաման տուած է Պոլսոյ զօրանոցներուն և մէտէսէներուն որ կազմ ու պատրաստ գտնուին ի հարկին Հայերն ջարդելու համար։ Աւելի հաւանական է թէ այդ հրահանգն աւելի թուրք շարժման համար եղած լինի և Հայու անուամբ ըրած են։

Ձերբակալութիւնք սկսան Հայերէն։

Կ. Պոլիս, Նոյ. 11

Կարնէն պաշտօնական թղթեր հասան, կոտորածն ծանուցուածէն աւելի է եղեր։ Աւելի քան 5հարիւր է մեռեալներու թիւն, նոյնչափ հաշուին վիրաւորք և անյայտք։ Շրջակայ բոլոր գիւղերն հրոյ ճարակ ըրած են։ Կարնոյ առաջնորդի առ Պատրիարք սրբազան ուղղած նկարագիրն այնքան աղեկտուր է եղեր որ՝ Նորին Սրբազնութիւնն ողջոյն օր մը արտասուեր է։

Ջարդն դադար գտած չէ, Երզնկայէն և Կիլիկիոյ զանազան կողմերէն սոսկալի ջարդերու գուժեր կը հասնին։ Մանրամասնութիւնք կը պակսին։ Վանայ առաջնորդէն պատրիարքարան եկած հեռագիր մը կը ծանուցանէ Համիտիյէ հեծելագնդերու Վանայ չրջականերն ըրած ասպատակութիւնները, որոց իբր թէ առաջքն չկրնար առնուլ կառավարութիւնն։ Վասպուրականի գիւղացիք քաղաք լեցուած են, ուր սով մ'սկսած է, և նոյն իսկ առայս օգնութիւն կը հայցեն Կ. Պոլսէն։

Ամսոյս երեքին սկսած ձերբակալութիւնք կը շարունակուին, արդէն քանի մը հարիւր բանտարկուած են։ Կ'ըսուի թէ՝ անլուր տանջանքներ տալով բանտարկելոց խոստովանութիւններ ընել հարկադրեն։ Հին բանտարկեալներէն շուրջ 500ներ կան ի բանտին, յորոց մի քանի խմբեր չգիտցայակապ ղրկուեցան նաւերով չգիտեմք ուր, ըստ ոմանց ծովու յատակը։

Նոյ 5ին Մաքսիմոֆ Ռուսիոյ դեսպանատան կողմանէ, Նորատունկեան Գաբրիէլ Եպարքոսին կողմանէ պատրիարքարան գալով ծանուցին թէ՝ «իրա՞ւ է որ Հայք միացած ընդ Թուրք ազատականս մի ցոյց կը պատրաստեն»։ Պատրիարք Հայրն պատասխանեց թէ «տեղեկութիւն չունի և չի յուսար»։ Երկուքն ալ խնդրեցին որ Պատրիարք Հայրն կոնդակաւ մը ժողովրդեան խաղաղութիւն քարոզէ։ Մրտածել խոստացաւ Պատրիարք Հայրն։ Նոյն օրն Նազիմ Պատրիարքի հետ խօսակցութեան առթիւ միևնոյն նիւթերու վրայ խօսած և միևնոյն պատասխանն ընդունած է։ Պատրիարք Հայրն նորանոր ջարդերու գուժերն ստանալով, լուր ղրկեց թէ իրաց ներկայ վիճակին մէջ կոնդակ աւելի կը գրգռէ ժողովուրդն։

Վեց Մեծ Պետութեանց Ա. թարգմաններն Բ. Դուռն երթալով, ծանուցած են իրենց կառավարութեանց կողմանէ թէ՝ պէտք է վերջ տալ գաւառաց ջարդերուն, իսկ եթէ կառավարութիւնն ինքզինք անկարող կը զգայ, իրենք պատրաստ են խաղաղութիւնն հաստատելու, որպէս երբեմն ի Լիբանան։

Նոյ. 6ին ողջոյն օրն աւագանեաց ժողով գումարեալ էր ի Եըլդըզ, Սուլթանը իբր միակ միջոց իրաց ներկայ վիճակին Հայերն ջարդել կ'առաջարկէ, նախարարք չեն համակրիր. Բեամիլ ժողովը թողլով կը հեռանայ, մի քանիներ իրեն կը հետեւին. Սուլթանն կը կասդի, Նախարարութիւնն կը փոխէ, և Բեամիլի աքսորումն կը հրամայէ։ Վերջապէս Խալիլ Բիֆաթ փաշայ Եպարքոս կորոշուի և մի քանի կրօնամոլներ նախարար։ Այս փոփոխութիւն յաջորդ օրն հանդէսով կը հաստատուի։ Երկու օր վերջ Բեամիլն մասնաւոր շոգենաւով Զմիւռնիա կը ղրկուի իբր կառավարիչ։

Նոյ. 8ին Թուրք ազատականներ պահարանաց մէջ ներփակ յայտարարութիւն մի կը ցրուեն թէ երեսփոխանական ժողով մը պէտք է, երկրի գործերն կառավարելու և ի հարկին քրիստոնէից յարձակումներն զսպելու, և իսլամութիւնն փայլեցնելու համար։ Ազատականներն Իսլամաց մոլեռանդութիւնն չոյելով զայնս իրենց կողմ վաստակիլ կ'աշխատին։

Բեդրսպուրկի Թրքաց դեսպանին ըսուեր է թէ Զարն սեղեակ է ձեր տուած ջարդերուն եթէ չարունակուի պիտի հարկադրուի զօրք մացնել սահմանագլխէն։

Վեհափառ կաթողիկոսն Բեդրսպուրկի արտաքին գործոց նախարարութեան միջոցաւ սեղոյս Ռուս դեսպանատունէն Թուրքիոյ Հայոց ու պատրիարքարանի վիճակի մասին տեղեկութիւն հայցած և ընդունած է։ Կ'ըսուի թէ Բեդրսպուրկէ հեռագրուած է որ Վեհ. կաթողիկոսն Զարի տեսութեան երթայ։

Ոստիկաններ կեցած են Անգ. թղթատարութեան առջեւ ներս մտնող և դուրս ելնողներն կը խուզարկեն և ապա կը ձերբակալեն։

Հնչակեանք չատ կորսնցուցած են իրենց վարկն ժողովրդեան առջեւ։ Այս կուսակցութիւն չարեաց պատճառ կը համարուի։

Արտաքին թշնամութեաց առաջքն վերջապէս կրնայ առնուիլ եթէ մենք միակամ գործմամբ, սակայն ցաւալի է որ միակամութիւն կը պակսի ի մեզ, և նոյն իսկ այս օրերս մի ներքին երկպառակութիւն սկսած է ծնունդ առնուլ, որ եթէ յառաջ երթայ մեծ վտանգ կը սպառնայ մեզ և մեր Եւրոպիոյ առջեւ 18ամեայ աշխատութեամբ, մեծամեծ զոհողութեամբ, ջանիւք և արեան զոհերով վաստակած համակրութիւնն ու յառաջ տարած դատն պիտի կորսնցնեմք, և անբարոյական ու անսկզբունք ազգի մը համբաւն պիտի վայելեմք։

ԾՈՎ

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԱՌ ՈՏՍ ԼՈՐՏ ՍՕԼԶՊԷՐԻԻ

Սուլթան Համիտ առ Լորտ Սօլզպէրի նամակ մ'է յղած յորում կ'ասէ թէ սրտիկը շատ ցաւ զգացած է՝ կարդալով իւր ատենախօսութիւնն և իւր այն կարծիքն թէ խոստացուած բարեկարգութիւններն չպիտի գործադրուէին։

«Միակ պատճառն, կ'ասէ Համիտ, որով Լ. Սօլզպէրի կասկած կը ձգէ իմ բարի դիտաւորութեանց վերայ, պէտք է լինին անձանց ոմանց մեքենայութիւններն աստ և կամ ստայօդ զրոյցքն այդպիսի կարծիք յառաջ բերելու նպատակաւ յօրինուած։ ... Ես կը կրկնեմ թէ պիտի ի գործ դնեմ բարեկարգութիւններն։ Զայնըս պարունակող թուղթն առջեւս պիտի դնեմ և պիտի ջանամ որ իւրաքանչիւր յոդուած իրականանայ։ Այս իմ լուրջ որոշումն է, և կուտամ իմ պատուոյ խօսքը։ Կը փափաքիմ որ Լորտ Սօլզպէրի գիտնայ զայս, և կը խնդրեմ ու կ'աղաչեմ Նորին Լորտութենէն որ վստահելով իմ այս յայտարարութեանց, ուրիշ ատենախօսութիւն մ'անէ ի շնորհս այն բարեկամական զգացմանց և սրամադրութեան զոր ունի ինքն իմ անձիս և իմ երկրիս նկատմամբ։ Այս խնդրոյս արդիւնքին ամենամեծ անձկանօք պիտի սպասեմ։»

Լ. Սօլզպէրի դաղթային գործակալաց համաժողովին մէջ ի Լոնտոն կարդաց Սուլթանին այս նամակն, և իբրեւ խորհրդածութիւն կամ իբրեւ Համիտի կողմանէ խնդրուած նոր ատենախօսութիւնն, ասաց հետեւեալ խօսքերն.—

Ինչպէս գիտէք, մենք եւրոպական համաձայնութեան մէկ մասն ենք, որ որոշած է, որքան որ գործէ, գործել միաձայնութեամբ։ Անձինք ոմանք կը թուին այն կարծիքն ունենալ թէ մեր ձեռքն են Տէրութեանց որոշումներն։ Այդ կը լինի չափազանց մեծ ազդեցութիւն վերագրել մեզ։... 25 տարի առաջ դեռ կը գտնուէին կարող և լուսամիտ մի քանի թուրք պետական մարդիկ, Ռիւսթէմ Փաշայի կարգէն, բայց այժմ չկան։ Կը յորդորեմ զձեզ նկատելու թէ Հայկական սոսկալի խնդիրն նոյնքան ձեռնհաս մարդոց չգոյութեան խնդիրն է որքան պարտ ու պատշաճ օրինաց նուազութեան։ Նոր տնօրինութեանց և թարմ հրովարտակներու գրութեամբ չէ կարելի լնուլ, մանաւանդ արեւելեան հասարակութեանց մէջ, զտեղն այնպիսի կառավարիչներու որք գիտնան քաջութեամբ և պարկեշտութեամբ կատարել իրենց պարտաւորութիւն։»

Եւրոպիոյ և Ամերիկայի մամուլն առ հասարակ նկատեց Համիտի նամակն իբրև յուսահատեալ և շուարեալ իշխանի նուաստ և խաբէական մէկ նոր ցոյցն։ Ն. Ե. Թայմզ ասաւ թէ նամակն միանգամայն սրտայուզիչ. զբօսալի և զայրացուցիչ է։ Սը՝Ն յայտարարեց թէ նամակին մէջ սրտայուզիչ ոչ ինչ կայ, լոկ ժամանակ շահելու համար եղած աղուիսութիւն է։

Ա. Ռ
ԲԱԺԱՆՈՐԴՍ «ՀԱՅԿԻ»

Այս թերթ 1896ին ևս պիտի հրատարակուի, ինչպէս այս տարի, ամիսն երկու անգամ։ Բաժանորդագրութեան պայմաններն նոյն կը մնան, այսինքն երկու տոլար, 10 ֆրանք կամ 4 ռուպլի ամեն երկրաց համար։

Բաժանորդագներն կրնան յղուիլ հետեւեալ կերպերով։

Ամերիկեան տոլար թղթադրամ նամակի ծոցով։

Ամերիկեան փոսթ-սթէմփ նամակի ծոցով.

Մընի Օրտըր.

Օտար երկիրներէն դրամ յղելու հետեւեալ կերպերն կան.

Մընի Օրտըր.

Բրէտի Լիօնէի փոխանակագիր.

Ֆռանսական դէմպռ-բոսդ.

Նամակի ծոցով ոսկեդրամ կէս լիրա, որ նուրբ լինելով անշօշափելի է։ Եգիպտոսէն և Պոլսէն այս կերպով բաժանորդագներ մեզ յղուած են ապահովապէս։

Դրամ պարունակող նամակներն ապահովագրել պէտք է։

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն Հայք ուսողներն թէ բաժանորդագրութեան մեր պայմանն է կանխիկ վճարում. այսինքն տարեւոյն սկիզբէն, Յունուար ամսուն առաջին կիսուն մէջ դրամն պէտք է մեզ հասցունել, ոչ թէ ամիս մի, եր-

կու ամիս և աւելի թողուլ զմեզ անստուգութեան մէջ թէ այս ինչ կամ այն ինչ բաժանորդներն կ'ուզե՞ն վճարել և շարունակել նոր տարւոյն համար։

Խմբագրութեանս համար հինգ տարիէ ի վեր աւելորդ չարչարանք պատճառեր են ոմանք դանդաղ շարժելով։ Կը խնդրենք որ այս տարի խնայեն մեզի, վասն զի ազգային այս ճգնաժամուն մէջ մեր յայտնի և ոչ յայտնի աշխատանքն արդէն մեզ ճմլելու չափ ծանր են։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Տէրութիւնք, փոխանակ իրենց նաւատորմիղներն Թրքական ջրերէն հեռացնելու, որպէս Սուլթանն խնդրելով կը խնդրէ, կը թուին որոշած լինիլ անպայման ժամանակաւ պահել զայնս այս մօտականերս։ Բրիտանական նաւատորմղի մէկ մասն ընդ հուպ պիտի մեկնի Սելանիկէն դէպ Զմիւռնիա, ուր միւս Տէրութիւնք կը ժողովեն իրենց մարտանաւեր։ Այս շաբթու Զմիւռնիա սպասուող Բրիտանական նաւերն են ինն մեծ զրահաւոր և ութ ուրիշ մարտանաւ։ Մնացեալն պիտի սպասէ ի Սելանիկ։ Ֆռանսա արդէն Զմիւռնիոյ առջեւ ունի մէկ զրահաւոր և վեց մանր մարտանաւ։ Ռուսիա երկու մարտանաւ ճամբայ հաներ է դէպ նոյն վայր, և հզօր նաւատորմիղ մ'ալ Սեւ ծովուն արեւմտեան մասին մէջ ունի։ Կը զրուցուի թէ երկու գերմանական մարտանաւեր ալ ճամբան են դէպ նոյն կէտ։ Աւստրիա արդէն ունի երկու զրահաւոր և չորս մանր մարտանաւ Զմիւռնիոյ առջև։ Շարժումն կերեւի լինիլ նաւատորմիղներու կեդրոնացում նաւամատոյցի մի առջեւ որոյ մասին Տէրութիւնք համաձայնած են։

Անգլիոյ, Ռուսիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ խնդիրքն թէ կ'ուզեն մէկ մէկ պահականաւ ևս ունենալ Պոսֆորի մէջ, Դրան կողմանէ առարկութեանց հանդիպած և մերժուած է։ Դեսպանք պիտի ժողովին խորհելու թէ ինչ քայլ պարտին առնուլ։ Անցեալ եօթնեկի վերջերն եղած տարաձայնութեան հակառակ՝ Տէրութեանց միջեւ համաձայնութիւնն այժմ իրապէս կատարեալ է, և դիւանագիտական աղբիւրէ հաստատուած է թէ Թնդանօթանաւերն բռնի պիտի անցնին Տարտանելէն եթէ Դուռն թոյլտուութիւն չտայ։

Ասիական Թուրքիոյ ներսերէն այս օրերս լուրերն աւելի քան սովորական դժուարութեամբ կը ստացուին։ Իմացուած է թէ Զէյթունի դէմ Թրքական գործողութիւնք սկսած են Սակայն այս մասին պաշտօնական աղբիւրէ լուր չառնուիր։ Տէրութեանց ներկայացուցիչք Արեւելեան Խնդրոյն այս մասնաւորութիւնն յատ ուշադրութեամբ կը դիտեն, քանզի եթէ հայկական տեղեկագրութեանց պարտ է հաւատալ, Հայոց բաւական բանակ մի այժմ կայ ի Զէյթուն, և Թրքական զօրքըն կրնան դժուար պատերազմի մի բռնուիլ հոն·

Եէմէնի մէջ ծանր ապստամբութիւն տեղի ունեցած է, և Արաբք, թուով 45,000 և լաւ զինուած, յաղթած են Թուրք զօրաց երեք յաջորդական մարտերում։ Թրքերն այժմ պաշարուած են Սանա քաղաքի պարիսպներուն ներսն։

Խարբերդի ազգայնոց կոտորածի երկիւղն, որպէս յայտնուած էր առ Սր. Պատրիարք Հայրն ուղղեալ խնդրագրին մէջ զոր հրատարակեցինք մեր նախորդ թուով, դժբաղդաբար կատարելապէս հիմնաւոր լինիլ ցուցին դէպք։ Հեռագիրն ծանոյց թէ արդարեւ մահմետականք երկիցս յարձակած են Խարբերդի Հայոց վերայ, առաջին անգամուն Հայք յաջողապէս ինքնապաշտպան լինելով ետ մղած են Քրդերն, բայց երկրորդ հեղուն սպաննած են իբր 800 Հայ։ Ամերիկայի միսիոնարութեան շէնքերուն ութն կողոպտած և աւերած են։

MISS ALICE STONE BLACKWELL Նիւ Եորք Ուըրլտի մէջ նամակ մի հրատարակեց որով ցոյց տուաւ թէ կոտորածներն Սուլթանին հրամանաւ կը կատարուին, քանի որ Խարբերդի ջարդի ատեն միսիոնարաց կեանքին վնաս չեն հասուցած կատաղի մուսիւլմանք։ Եթէ բարձրագոյն հրահանգի համեմատ չշարժէր խաժամուժն, միսիոնար և հայազգի քրիստոնէից միջև այդպիսի խտիր չպիտի դընէր։

Կ. Պոլիս, Նոյ. 25. Հիմա որ հոս թէ ասիական գաւառներում դարձեալ հանդարտութիւն կը գոյանայ, հաշիւ անել սկսած են թէ որքան վնաս եղած է վերջին խռովութեանց միջոցին։ Իրապէս Հայեր զվնասն կը հաշուեն 10 միլիոն լիրա, միայն Անատոլուի բաժինն։

Կ. Պոլսոյ Ամերիկեան միսիոնարք, այլ և այլ գաւառներէ հասած հաշիւներն իրարու բաղդատելով եկած են այն եզրակացութեան թէ իբր 15,000 Հայ ջարդուած է վերջին վեց ամսուան մէջ, և իբր 2,000 Թուրք։ Հայկական հաշուով պէտք է ատոր կրկնապատիկն դնել։

Հետեւեալ հաշիւն եղած է մի քանի գլխաւոր տեղերու կոտորածոց մասին.

Անուն	Քաղաք	Գիւղօրէք
Տրապիզոն	.800	300
Պայպուրտ	500	300
Կիւմիւշխանէ	250	300
Երիզա	1,000	900
Բաղէշ	800	400
Խարբերդ		1,000
Տիարպէքիր	2,500	500
Կարին	700	500
Խնուս		300
Պուլանըխ		400
Սեբաստիա		300
Բալու	450	200
Ալպուստան	300	100
Ուրֆա	300	100
Գումար 13,200		

Տիարպէքիրի Հայք զինուած լինելով, բուռն կերպով ինքնապաշտպան եղան և սպաննեցին իբր 1,500 Թուրք և Քուրդ։

Նիւ Եորք նահանգի մայրաքաղաքն եղող Օլպընիի մէջ, Ամ Ֆէլլօներու Սրահում, մաս-միթինկ մ'եղաւ, իբր 2 հազար հոգւով, և Հայոց Խնդրոյն ի նպաստ որոշումներ քուէարկուելով յղուեցան Ուօշինկթըն և օտար Տէրութեանց։

Թրոյ քաղաքում ևս եղաւ նոյնպիսի մաս-միթինկ մի։

Սիրակուսի մէջ եղած մաս-միթինկին նկարագիրն տեղւոյն Սթանտարտ թերթին մէջ պատմուած կը գտնենք երկարօրէն, մեր հայրենակից Տիար Գապատաեանի ատենախօսութիւնն ամբողջ տըպուած։ Խմբագիրն կ'ասէ թէ նորա սրտաբուխ և պերճախօս ատենաբանութիւնն ունկնդրաց շատերն յարտասուս շարժեց։

Պոսթընի մէջ ալ նշանաւոր մաս-միթինկ մ'եղաւ ուր կառավարիչն իւր ատենախօսութեան մէջ դիտել տուաւ թէ Միացեալ Նահանգք կնճռոտ Նիզակակցութիւններէ խորշելու փափաքով՝ չիցէ՛ թէ իւր անտարբերութեամբ նիզակակից լինի ոճրագործ զօրութեանց հետ ի Թուրքիա։

Նիւ Եորքի մէջ Նոյ. 21ին եղաւ մաս միթինկ մի ի Զիքրինկ Հօլ, նախագահութեամբ մեծանուն Սէթ Լօի։ Կար բաւական մեծ բազմութիւն։ Նշաւոր անձանց կողմէ հեռագիրներ եկան համակրութեան։ Եղան ընտիր ատենախօսներ, ի միջի որոց երկու Հայեր ևս, այսինքն Պրն. Վարդան Տիլոյեան Յասունցին և Պրն. Հ. Քիրէչճեան։

Նախորդ իրիկունն Նիւ Եորքի Հայերն ալ ընդհանուր ժողով մ'ունեցան ատենապետութեամբ Տիար Հայկունւոյ և որոշեցին որ յանուն իրենց շնորհակալութեան ուղերձ մի մատուցուի հետեւեալ օրն Զիքրինկ Հօլի Ամերիկեան քաղաքացւոց միթինկին։ Տոքթ. Այվազեան և Գաբրիէլեան որոշուեցան իբրեւ մասնախումբ այդ յիշատակագիր պատրաստելու, որ միթինկին մէջ յաջորդ օրն կարդացուեցաւ և քուէիւքն ընդունուելով կցուեցաւ Ամերիկացւոց որոշումներուն, յղուելու առ Նախագահն Միացեալ Նահանգաց։

Ամերիկայի Պօստ ընկերութեան քարտուղար Սմիթ հեռագիր մի պիտի պատրաստէ որ պէտք է ստորագրուի Նահանգին բոլոր քաղաքապետներէն և յղուի Նախագահին։

Ֆիլէզնոյէն կը գրէ մեզ Տիար Նշիկեան.

Գործի եղանակ ըլլալով Հայերն մեծ մասամբ դուրսերը ցրուած են։ Կը վախեմ թէ շատերը անտարբեր մնան Հայրենասիրական Դաշնակցութեան մասնակցելու, քանզի այն սխալ համոզման վրայ են թէ այլ ևս այդպիսի Դաշնակցութեան պէտք չկայ, քանի որ մեծ տէրութիւնք

ԼՐՋՕՐԷՆ կ'աշխատին Հայկական Խնդրոյն և շուտով պիտի փրկուի Հայաստան։ Սիա՛լ կարծիք, ըստ ինձ, այժմ աւելի պէտք կայ կեդրոնացման քան ասկէ առաջ։ Բայց որո՞ւ կ'ըսես, ամենքն ալ կը խորհին որ ուրիշները աշխատին մեզ համար և կարճ երկայն բանի մը կապեն ու ազատեն զիրենք։

Պուլկարիոյ Բուսչուք քաղաքէն կը գրեն մեզ.

Հոս հանգանակութեան ձեռնարկ մը եղաւ, և որովհետև Ս. Պատրիարք Հօր անունը կար և հանգանակութեան ձեռնարկողն գիրք մ'ունէր, յօժարակամ մասնակցեցան և արդիւնքն եղող 900 ֆրանքն Նոյ. 6ին ուղարկեցին Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և լսում ենք թէ նաև այլ շրջակայ հայ ազգաբնակութիւնք էլ մտադրվել են այս նման հանգանակութեան։

Տիար Ս. Քէպապեան, Եէյլի մէջ իրաւագիտական ուսանող, նամակ մի հրատարակեց Նիւ Հէյվընի Ըէճիսթըր թերթին մէջ և յորդորեց քաղաքին մարդասէր հասարակութիւնն մասնակցիլ հայ սովելոց նպաստելու գործին։

FACTS
ABOUT
ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ։

Տետրակն կը պարունակէ Կլատսթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Զէսթըր, և Տիլօնի յօդուածն՝ Քոնթէմփորէրի Ռիվիւէն արտատպուած։ Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենաշօրաւորն և ամենակատարեալն է, զոր կարդացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կատղի թուրք կառավարութեան դէմ։ Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ։

Գին օրինակին է 20 սէնթ։ Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը տրուի 15 սէնթէն։

Դիմել ՀԱՅՐի խմբագրատունն։

ԺԱՄԱԳՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճարտարապետ շոգեշարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյներն ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու։

Նաև կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով։ Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խարեբայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին։

MISAK M. PHILIP,
25 Monroe St. New York.

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆն 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Դասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ.ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻՔԸՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետևեալ պայմաններով վճարելի յԵւրոպա.

Ոչ	աւելի	քան	5	տոլար	5 սէնթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ամէն կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Աստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ամէն կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.



ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆԵՐ

Հայերը որ շատ չեն երթար թատրոն, բայց պէտք ունին զբօսանքի և անմեղ զուարճութեան, կրնան ամենաքաղցր նուագածութիւնը իրենց սենեակներուն մէջ վայելել, մեր այս աշխարհահռչակ սնտուկներէն գնելով։ Մեր սնտուկները 50 սենթնոցէն մինչև 1,500 տալերլոց են։ Մարդուն կեանքին չափ երկար կը դիմանան։

Այս երկրին մէջ տարիներով գործածելէ վերջ, կրնաս հետդ տանիլ տուն իբրեւ նորանշան և ուրախացունող ընծայ մը քու սիրելիներուդ։ Դիմէ առ

ԺԱՔՕ և ՈՐԴԻ — JACOT & SON
39 Union Square, New York.

ՆԻՒ ԵՈՐՔ

ՀԷԹ ՀԱՈՒԶ

անունն է Ուստըրի Ֆրոնթ փողոցին մէջ գտնուող թիւ 14 վաճառատանն, ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց, ձեռնոց, շապիկ, օձիկ, փողկապ, ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է ասի, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են։

ԵՐԿԸՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

(Այս գրքերն գնելու համար գրել կամ դիմել Հայքի խմբագրատունն :)

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ եւս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է, հետեւապէս հարցն այն չէ թէ կարո՞տ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացունեմք։ Ոչ թէ բան մ'անելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ԶԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս Ֆրանք կամ 1 րուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

Կը խնդրեմք որ մինի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եօրքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7դ. Էվընիու Նիւ Եորք
26դ. և 27դ. փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & Co.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
(Հաստատեալ ի 1849)
65 Front St., Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ
Այս պանքան հիմնուած է 1854ին. Կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ։ Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչեւ կէս օրէն վերջ 4։ Շաբաթ օրերն 9էն մինչև 1։
Հասցէն է 314 Մէյն փողոց։

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.
CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.
Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. **$3** a year. Sample copies sent free.
Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ